ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«16» հոկտեմբերի 2023 թ. N 70-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի N35-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 10-րդ ենթակետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2021 թվականի մայիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահին կից գիտատեխնիկական խորհուրդ ստեղծելու, խորհրդի անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» N35-Լ հրամանի.

1) N1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N1 հավելվածի,

2) N2 հավելվածի 4-րդ կետը լրացնել նոր 7-րդ ենթակետով հետևյալ խմբագրությամբ՝

«7) նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանող քաղաքաշինական նախագծերի համար միջազգային փորձի կիրառմամբ՝ գիտական և

փորձարարական ներուժ ունեցող կազմակերպությունների կողմից մշակված «Հատուկ տեխնիկական պայմանների» ուսումնասիրումը և համաձայնեցնումը:»,

3) N 2 հավելվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

« 6. Խորհրդի քարտուղարը

1) Խորհրդի քարտուղարն ի պաշտոնե ՀՀ քաղաքաշինության կոմիտեի շինարարության և գիտատեխնիկական նորմավորման վարչության շինարարության քաղաքականության և գնագոյացման մեթոդաբանության բաժնի պետն է,

2) Խորհրդի քարտուղարը.

ա. իրազեկում է Խորհրդի անդամներին նիստի անցկացման վայրի, օրվա և ժամի մասին,

բ. մինչև նիստի հրավիրումն ապահովում է անհրաժեշտ նյութերի (գրագրությունների, եզրակացությունների, հավաքագրված տվյալների) տրամադրումը Խորհրդի նախագահին, անդամներին (աշխատանքային խմբի անդամներին), կազմակերպում է Խորհրդի աշխատանքների փաստաթղթային ապահովումը,

գ. կազմակերպում է նիստի անցկացումը,

դ. կազմում է Խորհրդի նիստի արձանագրությունները,

3) Խորհրդի քարտուղարը չի հանդիսանում Խորհրդի անդամ:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

10/14/2023

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2023 թվականի հոկտեմբերի
N..70..- Լ հրամանի

«Հավելված N 1
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2021 թվականի մայիսի 7-ի
N 35-Լ հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀԻՆ ԿԻՑ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Արմեն Ղուլարյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ (Խորհրդի նախագահ)
Դավիթ Գրիգորյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ (Խորհրդի նախագահի տեղակալ)
Գագիկ Գալստյան	ՀՀ շինարարների միության նախագահ (համաձայնությամբ)
Բորիս Քոչարյան	Հայաստանի Հանրապետության ճարտարապետների պալատի նախագահի տեղակալ (համաձայնությամբ)
Գագիկ Մարտիրոսյան	«ԱՐՄ-ՌՈՍՍՏՐՈՅ» ընկերության խորհրդի նախագահ, տեխնիկական գիտությունների դոկտոր (համաձայնությամբ)
Էդուարդ Խաչիյան	ԳԱԱ ակադեմիկոս, տեխնիկական գիտությունների դոկտոր, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի շինարարական մեխանիկայի ամբիոնի վարիչ (համաձայնությամբ)
Զավեն Խլղաթյան	ՀՀ ներքին գործերի նախարարության «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի կառուցվածքների սեյսմակայունության վարչության պետ (համաձայնությամբ)
Տիգրան Դադայան	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի շինարարական կոնստրուկցիաների ամբիոնի վարիչ (համաձայնությամբ)

Գրիգոր Ազիզյան	«Հայնախագիծ» բաց բաժնետիրական ընկերության տնօրեն (համաձայնությամբ)
Սարգիս Մարգարյան	«Հայնախագիծ» բաց բաժնետիրական ընկերության երկրաբան-բաժնի վարիչ (համաձայնությամբ)
Կորյուն Կարապետյան	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Մեխանիկայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության փորձարարական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ (համաձայնությամբ)
Հասմիկ Գևորգյան	«Հորիզոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գիտահետազոտական, արտադրատեխնիկական և փորձարարական լաբորատորիայի ղեկավար (համաձայնությամբ)
Ալեքսանդր Վարդանյան	«Շինսերտիֆիկատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն (համաձայնությամբ)
Արմեն Գյուլխասյան	«Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» բաց բաժնետիրական ընկերության տնօրեն (ի պաշտոնե)
Աղասի Հովսեփյան	«ԱԻՍՄ» բաց բաժնետիրական ընկերության տնօրեն (համաձայնությամբ)
Արայիկ Քուրդյան	«Կառուցապատողների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ)

»: